

**Heralding of the Armenian Genocide: Reports in The Halifax Herald 1894-1922, compiled by Katia Minas Peltikian. Halifax, Nova Scotia: Armenian Cultural Associations of the Atlantic Provinces, 2000.**

Պէյրոսի Ամերիկեան Համալսարանի անգլերէնի դասատուներէն, Մագիստրոս Արուեստից տիտղոսակիր Քաթիա Մ. Փելթէքեան շնորհակալ աշխատանք մը կատարած է 352 էջոց գիրքի մը մէջ լոյս ընծայելով գանատական *The Halifax Herald* լրագրին մէջ լոյս տեսած հայոց վերաբերող մամուլյ լրատուութիւնները, որոնք առնչուած են 1894-96ի համախտեան ջարդերուն, 1909ի Ատանայի կոտորածին եւ 1915-22ին հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան:

Անշուշտ մամուլի կտրօններու նմանօրինակ հրատարակութիւններու մէջ առաջինը չէ Փելթէքեանի գիրքը: Ռիչըրտ Տիրան Քոյեան 1980ին հրատարակած է *The Armenian Genocide: First 20th Century Holocaust* խորագրեալ հայկական ցեղասպանութեան առնչուած ամերիկեան մամուլյ կտրօններու իր հաւաքածոն, որ յետագային երկու անգամ վերատպուած է: Անոր յաջորդած է *The Armenian Genocide as Reported in the Australian Press* (Միանի, 1983), Դանիէլ Գարամանուկեանի կազմած *El Genocidio armenio en la prensa del Uruguay, ano 1915* (Մոնթեվիտօ, 1985) եւ Գանատայի Հայ Դատի Յանձնախումբի հրատարակած *The Armenian Genocide in the Canadian Press, Volume I: 1915-1916* (Մոնրէալ, 1986) մամուլյ կտրօններու հաւաքածոններու հրատարակութիւնը: Սուրիահայ Նորա Արիսեան, իր կարգին, Եւրոպայի ու Լատինական Ամերիկայի երկիրներուն մէջ սուրիական սփիւռքի մամուլի կտրօններու հաւաքումով զբաղած է եւ վերջիններոս հիման վրայ 2001ին Երեւանի մէջ պաշտպանած իր քեկնածուականատենախօսութիւնը՝ «Հայոց Ցեղասպանութեան Լուսարանումը Սիրիական Մամուլում (1877-1930) Եւ Դրա Վերաբերեալ Սիրիացի Մտաւորականների Կարծիքը» (տե՛ս՝ Գեորգ Կէօնճեան, «Երեւանի Մէջ՝ Ազգային Ակադեմիայի Արեւելագիտութեան Ինստիտուտի Մէջ Նորա Արիսեանի Թեկնածուական Պաշտպանութիւնը», *Չարթըր*, Շարքս, 5 Օգոստոս 2001, էջ 6):

Փելթէքեանի գիրքը գլխաւոր երկու պատճառներով կը տարբերի վերոյիշեալներէն: Առաջին՝ ան ներառած է նաեւ 1894-96ի ջարդերն ու Ատանայի Աղէտը, եւ երկրորդ՝ մամուլյ կտրօններու բնագրին լուսապատճեններուն կողքին, որոնք միշտ բաւարար յստակ չեն, տրուած է նաեւ անոնց գրութիւնը՝ դիրացնելով պրպտողին եւ ընթերցողին գործը: Ան յատկապէս լայն տեղ (շուրջ 180 էջ) տուած է 1894-96ի ջարդերուն, որոնց մասին կտրօններու այլ հաւաքածոյ տեսած չենք: Պրպտողին գործը հեշտացնելու ուղղութեամբ գիրքը լաւ կազմակերպուած է: Տրուած է շատ կարեւոր ցանկ նիւթոցը, իսկ կազմողը՝ նախարանէն ետք, նիւթերը դասակարգած է ժամանակագրական հիմունքով՝ տալով իւրաքանչիւր տարեթիւր եւ ապա՝ այդ ընթացքին լոյս տեսած նիւթերը:

Հալիֆարս քաղաքը հիմնուած է 1749ին: Ան Անգլիոյ հետ առեւտուրի հիմնական նաւահանգիստներէն մին էր եւ 1840էն սկսեալ շոգենաւեր կը

բանէին կանոնաւոր կերպով: Ատլանտեանի ափին գաւառական այս քաղաքին հիմնական թերթը՝ *The Halifax Herald* արագ կապ ունէր Ատլանտեանի միւս ափէն Բրիտանիոյ հետ, ուստի աւելի տեղ կու տար արտաքին աշխարհի լուրերուն եւ այդ ծիրէն ներս՝ նաեւ հայոց ողբերգութեան:

Նախարանին մէջ, Փելթքեան արագօրէն անդրադարձած է հայոց պատմութեան՝ հասնելով ԺԹ. դարու վերջաւորութեան Հայկական Հարցի եւ 1915ի հայոց ցեղասպանութեան գործադրութեան պատմութեան: Նախարանին մէջ, այն՝ ինչ կը վերաբերի հայոց, իր ընդհանրութեան մէջ ընդունելի եւ օգտակար է, յատկապէս՝ օտարներուն համար: Լաւ պիտի ըլլար Բագրատունեաց Հարստութեան եւ անոր մայրաքաղաք Անիի թէկուզ անցողակի նշումը: Կիլիկիոյ մէջ հայերն անկախ պետականութիւն ունեցած են 1080էն 1375՝ աւելի քան հեղինակի նշած 200 տարին: Հայաստան օսմանցիներու եւ պարսիկներու միջեւ բաժնուեցաւ Չալտըրանի ճակատամարտէն որոշ ժամանակ ետք՝ 1555ին, եւ ո՛չ թէ 1405ին՝ Լենկթիմուրի մահուան տարին: Այսօրինակ վրէպներու եւ աստրօ-հունգարական պետութեան առնչութեամբ արտառոց սխալի մը («Բրիտանիա 1878ին իշխանութեան տիրացաւ Պոսնիա-Հերցեկովինայի եւ Աւտրիա-Հունգարիոյ վրայ», էջ VIII, եւ «Եւրոպան Թուրքիոյ տկարութենէն օգտուելով Աւտրիա-Հունգարիան կցեց», էջ IX) առաջքը դիրութեամբ կրնար առնուիլ, եթէ նախարանը պատմագետի մը վերահսկողութենէն անցնէր:

Բնական է, որ գործը չի սահմանափակուիր պատմական եղելութիւններու մասին այս նախարանով: Հիմնականին մէջ, անիկա հայոց ցեղասպանութեան պատմութեան համար նոր սկզբնադրիւր մըն է, որ հում նիւթ կը տրամադրէ եւ ուսումնասիրողին եւ այս հարցով հետաքրքրուող բոլոր մարդոց:

Փելթքեանի սոյն աշխատանքը, արդիւնք՝ համբերատար պրպտումի, երախտաշատ գործ մըն է եւ արժանի գնահատանքի:

ՉԱԷՆ ՍԱԸՐԼԵԱՆ